

Ս Ո Ր Ա Վ Ա Լ



Այս բառի մասին մերովսանն բաւական լուսաբանութիւններ գրած էինք «ՐԱՋՄԱՎԷՊ»ի անցեալ 1924 տարւոյ Մայիս - Յունիս, Պրահներու մէջ. որով յանձնած էինք մեզէն աւելի լաւաւ տեղեակ և հմուտ մասնագէտներու քննադատութեան, այսինքն համոզուելու համար, թէ մեր յայտնած գաղափարներն որքան ստուգութիւն կրնան ունենալ կամ ոչ:

Մէջտեղ գրուած վիճելի բառի շուրջն ամէն ոք իրաւունք ունի իւր կարծիքն յայտնելու. և մեզ մեծ զուարճութիւն է, եթէ հանդիպինք նոր մտքերու, նոր տեսութիւններու, որոնք խնդրական նիւթին վրայ՝ նոր լոյս մը սփռեն, և համոզիչ փաստերով անձանթթը լուծելու յանգին:

Կարո՞ղ ենք ակնկալել մի այդպիսի նորութիւն Պարոն Միրզաւոս Թիրեաքեանի յօդուածէն, խնդրական բառիս նկատմամբ, գոր «ՐԱՋՄԱՎԷՊ»-ն հիւրասիրած է անցեալ Դեկտեմբերի Պրակիս մէջ. կարծեմ թէ ոչ: Վասն զի Թիրեաքեանն մտտեցր է հարցին ո՞չ թէ գիտնականի մը հետաքրքրութեամբ և պաշարով, այլ աւելի հակամատուր բացասական մտայնութեամբ, ասանց մի արդիւնքն:

Կարո՞ղ էք ասել, Պարոն Թիրեաքեան, թէ քնն դրած էիք մտքերնիդ յօդուածը գրելու պահուն: Անշուշտ նոր լուսաբանութիւն մը, նոր լուծումն տալու խնդրական բառին, այնպէս չէ՞: Եւ ուրիշ բան չէր կարող լինել, որովհետև ասպարէզ կը նետուէր այս նախերգանքով. «Ըստ իս, խնդրոյ առարկայ բառս ոչ վարդանանի և ոչ փահապետեանի (մոտացեր է ընկեր Աճառեանն) փորձերով բացատրուած է և դեռ կարծաբանութեան կը կարօտի»: Ուրեմն մենք և «ՐԱՋՄԱՎԷՊ»-ի ընթերցողները կ'ակնկալէինք լսելու ձեր «գիտը» որ է յայտնած հիմնաւոր մտքերը, որոնք հաւանութիւն գտնէին լեզուաքննի բանասիրաց կողմէն: Հինաւուրց «ՐԱՋՄԱՎԷՊ»ին այդպիսի անտակնկալ մ'ընծայած կը լինէիք նոր տարւոյ առթիւ: Աւելի մեղամղձիկ կը հանգուցէք յօդուածիդ երկու ծայրերն հետևեալ խօսքերով. «Եզրակացնելով մեր (յոզն») վերի դիտողութիւնները կը կրկնենք թէ Սորակալ բառը ցարդ գոհացուցիչ լուծում մը գտած չէ՞»:

Ե՛նք կ'ընդունինք և կ'ընդգծենք այս խոնարհ խոստովանութիւնն, յանձնելով ի հարկէ կարո՞

ղագոյններին, լեզուաբանական մասնագէտներին գոհացուցիչ կերպով լուծելու հարցը: Մինչ այն ատեն մենք պիտի փորձենք, այս անգամ՝ օգտուն. լով ձեր իսկ գրութեանէն, հաւատստելու փաստացի մեր յայտնած գաղափարները, այսպէս հաստատած կը լինինք մեր «գիտը» ըստ ձեր բացատրութեան, նոր լոյս մ'աւելի սփռելով Սորակալի ծագումն վերայ:

Դժուարութեան առջև կանգնիլ, անկարողութիւն ցոյց կու տայ հաստատուն հիման վրայ զնելու բառիս գիտական ճիշդ ստուգաբանութիւնն:

ՍՈՐԱԿԱԼ ԼԱՐԱ- ՋԱՅ ԹԵ ԵԿԱՄՈՒՏ

Մեր Ուղղ. Ազգ. Մատենադարան մէջ (1906), բառիս առջև դրածն արցականն, արդէն շարժած էր տեղէն, և հարգաւոր թէ գաղթական բառ լինելու խնդիրն սկսել էր յուզուիլ նախընթաց ուսումնասիրութեանց մէջ:

Ի՞նչ շնորհիւ բառ, նախ ընկեր Աճառեանն համարելով ձեռագրական աղանաղութիւն, 1904էն ի վեր փորձեր էր վերականգնել: Երկրորդ՝ Հայր վարդանանեան, նոյն ճանապարհով գնալով և աւելի մանրամասնօրէն շնայաց լուծել հարցը «ՀԱՅԻՍ ԱՍՏՕՐԵԱՅ»ի էջերուն մէջ: Երրորդ, Յիւզանդի հայութիւնը պաշտպանողներն, թէ հայերու համար գրեց, ուրեմն. Չորրորդ, բանասէրներէն ոմանք, արդէն Սոր բառ մ'ունինք կ'ըսեն, որ խոռոչ, ծակ, ճեղք, նեղ անցք կը նշանակէ, արդ ասպատանն ունէր անշուշտ պարիսպ մը, և անցք մը ձիերու ելեմուտի համար, որով Սորակալն կը լինի անցքի ունդն, պահապանը: Այլք Ս և Խի փոխանակութիւն մը պարսկերէն ինչ ինչ բառերու հայերէնի մէջ:

Մենք առաջին եղանք որ Սոր բառը համարեցանք եկամուտ օտար մի լեզուէ: Բնական է որ նախնական ժամանակներէ, մինչև կի-

լիկեցուց յըջանն, յորում կորուսինք ազգային անկախութիւն և ազգային կեանք և մշակոյթն, տիրապետող ազգերու ազդեցութեան տակ սարած է Հայութիւնն և անոնցէն բազմաթիւ բառեր փոխ տաած և իբրացուցած: Ուստի նորութիւն մը չէր՝ երբ համարձակեցանք Սոր բառը պարսկերէնէ եկամուտ համարել: Պարսկերէնն ասած ժամանակս, պէտք չէ հակսնայ լոկ Ֆարսի, զնախի կամ պահլաւ լեզուներ, այլ նաև Արտ-

րերէնը և Նոր Պարսկերէնը Սասանեանց ժամանակէն մինչև Արաբներէն նուաճութիւն, յորում երկը լեզուներու փոխառութիւններ յառաջ եկած են և իրենց ազդեցութիւնն ունենցած հայ լեզուի և գրականութեան մէջ, ինչպէս ցոյց կու տան Բառգիրքներ և Հիւպչմանի Հայ Գիրակ. երկասիրութեան առաջին մասը, Հայկական ստուգաբանոցիւն փոխառած բառերու: Արով փոխառեցան կրնայ մասի կապը քակել, ի նկատի ունենալով Նոր Պարսկերէն, Արաբերէն բառերու հոսումը հայ լեզուի մէջ, և ինչն դժգոհարի ի շարք անոնց ընդունել նաև Սոր բնորոշ բառը պատի նշանակութեամբ:

**ՊԱՏՄԱԿԱՆ
ԿՈՒՈՒԱՆՆԵՐ**

Վերև ասացինք թէ մեր լուսաբանութիւններն աւելի հիմնական լինելու համար կարևոր է լեզուաբանական քննութեամբ ալ մտաւարըն. դուռած լինել. սակայն պատճական տեսութիւններ անբաժան են բանասիրականէն և կ'օժանդակեն անոր զարգացման. վասն զի բառերն ալ ունին իրենց պատմութիւնն և անցեալն. ներկայ հետազոտութիւններով է որ ցոյց կը տրուին անոնց խանարուքը, գաղթականութիւնն և հասարակչին կրած փոփոխութիւններն. բերանէ բերան անցնելով, փոխում են տառեր և նշանակութիւն: Թող զարմանալի չլինի մեր ասածն, շատ անդրադարձութիւններ և գիտեր պատահարի արդիւնք են: Կոլոմբոս կ'ուզէր երթալ Արեւելան Հնդկաստան, սակայն Առաջնորդան Ովկիանոսի հոսանքները մղեցին զինքն Միքսիքոյի ծովածոցն. նա զտած էր Ամերիկա:

**ՍՈՐԱԿԱԼԻ
ԽԱՆՁԱՐՈՒՐՔՆ**

Արիական հզօր ցեղի դարու տիրապետութիւնն մինչև Դ դարու սկիզբն անընչելի հետք թողեր էր Հայաստանի մէջ: Ատիւշաստի կրքը կը վառէր Վէտտայից սրբազան հուրն, անձնաւորեալ ի վահագն (վահ-Ակնի) և անմահացած Գողթան երգերով: Ատիւշաստի քուրմերն անարկու սօսի դարձան սուրբ խաչին, և ընկճուեցան երկնաւոր զօրութենէն, յանձն առին Յաղթողի կրօնքն. լուսատրոյն քուրմերու զաւակներն նուիրեց քահանայութեան. սակայն իրենց սրտի որն չլիջաւ. Ո՛ր գիտէ թէ Բիզանդ Ս. Վրթմանէս պաշարող քուրմերու սերունդն չէ. նորա սրտի մէջ կը վառի իւր ցեղի քննն Տրդատի դէմ և անոր յաջորդներուն,

որոց մէջ կը տեսնէ Դեմոտր և Գիտանէի սպաննողները: Գլակայ վանքը, Հացեաց դրամխոն, հեթանոս և քրիստոնէական կրօնքի և գրականութեան վտարարն եզաւ, անկից ելան մեր երկու մծ լուսաւորիչներն Սահակ և Մեսրոպ ներկու Պարսկերէն և Ատրերէն լեզուներու մէջ: Բիզանդ իւր պատմութիւնն գրած է անկախ Մեւրոբեան դպրոցէն, որով զուտ ժողովրդական և գործածական լեզուով. ուստի որքան իրեն ընտանի էր պահաւախտեմ և ախոռասպելեմ, նոյնքան ընտանի եղած է և Սուր կամ Սորակալն, զոր պիտի տեսնեք, որ սանսքրիտէն կու գայ, այն նշանակութեամբ որ վերաբերի ախոռոհն և սոսպատանին, իբրև վրակեցու և խնամակալ: Եթէ նոր պարսկերէնի մէջ չկայ սուր կամ Սոր, ինչ զարմանք, գուցէ նաև Եղիշէի գործածած բառերն ալ չգտնուին, լաչաք, քաչկէն, քրտկար, չկօթակ ևն. կը դադրին պարսկերէն լինելէ: Այս բառերու կարգէն է նաև Սուր և Սոր որ պատի պատանէի իմաստով դորձածք է Բիզանդ, երբ խօսքը անասուններու, գոմբուր, չորքոտանեաց բնակարաններու մասին է: Ինչպէս յետոյ պիտի տեսնեք մայր լեզուի գրականութեան մէջ՝ մի և նոյն բառն կրնայ մէկէ աւելի նշանակութիւններ ունենալ, ուստի «մեր իմացած կերպով չէ որ Սորակալը կը համաձայնեցնենք ախոռասպետի հետ»:

**ԱՐԱՔԱԿԱՆ ՍՈՒՐ
ՊԱՐՍԿԱԿԱՆԷ ԱՌՆՈՒԱԾ**

Ինչպէս Հայերն, նոյնպէս և Աբաբացիք են. թարգմտեր են Արիական քաղաքակրթութեան, աւելի սահմանադիակ չարկելով և իւրացուցեր են տիրապետողի լեզուէն և քաղաքակրթութենէն շատ քաներ: Արեւստանդ Մեծէն շատ յառաջ Պարսկական իշխանութիւնն ծովածուալ դիրք մը ստացեր էր, երկարելով իւր թեւերն ծովերէ ի ծով. անոր աէրութեան սահմաններն կը թանային կասպիական, Սև, Միջերկրականն, կարմիր, Հնդկական ծովերն: Պարսիկք իրենց գերիշխանութիւնը պահեցին մինչև խորին Արաբիոյ և Սելեուքեան թագաւորներու երևնալը: Ուստի դարեր և դարեր Միջազգայն և Ատրիկի բնակիչներն կրեցին արիական ցեղերու ոչ միայն ծանրութիւնն՝ այլ և օգտուեցան, աւելի զարգացած քաղաքակրթութեամբ ժողովուրդի մշակութիւնը: Արաբները բացառութիւն կարճած չեն, ինչ որ կարելի է հասկանալ թերթիւրով Պր. Հ. Հիւպչմանի Հայկական Գն.

բականութեան Ա Մասը, զոր ունինք աչքի տակ, և ուրիշ շատ մը Գեմման, Անգղ. և Գաղղիացի գիտնականներու ուսումնասիրութիւններէ, որով թիրեաքեանն բնաւ չիօթիւնու չէ, երբ իրեն կարծած աղբարեիքն՝ եկամուտ բնաւ մ'է Պարսիկ տիրապետողի լեզուէն, նոյն իսկ ապացոյցն ի նպաստ իւր գործածած բառգրքէն քաղելով, որոյ վրայ ինքն ալ պիտի գարմանայ:

ԵՐԿԻՄԱՍ

ԲԱՌԵՐ

Գրականութեան մէջ արդէն յայտնի է երկիմաստ բառերու կիրառութիւնն. լեզուաբանական քննութիւններ ապացոյցին այդ յեղաշրջութեան կանոններն, և գաղթականութեան միջնամայրի գործած ազդեցութիւններ բառերու օգընտելութեանը (acclimatation) գանազան ազգերու մօտ:

Բանակը մեր Առձեռն Բառարանը և պատահաբար վերցնենք մեր լեզուի գեղեցիկ բառերէն մին ՏԱՃԱՐ (հին պրսկ.), և կը տեսնենք թէ սրբան տարբեր նշանակութիւններ առած է այլ և այլ մատենագիրներու գրչի տակ, որոց մի քանի անուններ Պրոֆ. Հիւպը. Հայ-Քերական. աշխատութեան մէջ շարած է. ի միջի այլոց նաև Կնինզոց գրքի մէջէն յունարէն յօրօգալոց՝ Հարսնառ? որու լիմանց հայերէնն տաճարապետ դրած է, իսկ լատին թարգմանութիւնը՝ բարեկամ:

Իսկ երբ Պարսկերէնի մէջ ՏԱՃԱՐ կը նշանակէ, Չիրուստուն ձմրուան համար, նաև Շտեմարան, Տրոհնոց: Արաբերէնը՝ Ամարանոց՝ ծածկած հընչումով մը. էջ 251. N. 640. « Ինչ պիտի մտածէր բանասէր մը. էթէ ոչոք բազմազան նշանակութիւններէն մէկուն կամ երկուքին կապուելով, միտներէն մէկ մը կամ երկուք մը ժխտուէին: Ուստի թիրեաքեանի յորք կամ յոր բառի մասին մեր տուած իմաստի ժխտումն ապամասն է, էթէ կարելի չէ սակն սղղակի սխալուած:

Յետ ստեղծ, ըստ մեր սուրի ԿԱՄ ՍՈՐ ՊԱՏ ԿԸ ՆԵԱՆԱԿԻ

Յետ ստեղծ, ըստ մեր սուրի ԿԱՄ ՍՈՐ ՊԱՏ ԿԸ ՆԵԱՆԱԿԻ թիւները՝ արդ ուղղակի կը պատասխանենք թիրեաքեանի փաստին, որով կարծէ տապալել ի հիմանէ մեր կանգնած զԱՏը:

Մերական աստիճանութեամբ թիրեաքեանն կը փաստաբանէ, առնելով Պարսկերէն ընտիր բաւարանէ մը (Պերհան — Գաթը) թէ՛ « յորք

կամ յորք ճպատոյ նշանակութեամբ պարսկերէնի մէջ բնաւ չի գործածուիր (1) և քանի որ մեր բառին համեմատութիւնը պարսկերէնին հետ ևնթ է, հարապետեանին կառուցած պատը ինքնին ի հիմանէ կը քանդուի»: Շատ սակաւ է այդ գիտութիւնն «պատա մը քանդուել համար և լատին կ'ստէ doctus cum libro. այսինքն ուսուցողի ձեռքէն գիրքը առնել» բերանը կը փակուի:

Թիրեաքեանի հանդէպ կը դնենք երեք այլ ընտրելագոյն պարսկերէն բառարաններ, որոնք համեմատելով միայն ինդրական բառի շուրջը տրուած բացատրութեանց հետ՝ կը գտնենք լիակատար և կը դնենք անունները: Առաջինը Dr. J. A. Vullers հեղինակ երկու հատոր ընդարձակ պարսկերէն բառարանի: Երկրորդն է Գեորգ Գպր. Տէր-Յովհ. Պալատցոյ. Բարբորզ F. Steingass Ph. D. Պրկ. Անգլ. Անգլ. հ. երեքը կը միաբանին թիրեաքեանի մատնանշած ընտիր բառարանի 1. 2. 3. թ. տուած բացատրութեանց հետ, ինչ ինչ տարբերակներով. այսինքն 1. Առաջինը իրախանք Festum դնելն յետոյ կը յաւելու և Տ.մը, որ կը նշանակէ թէ սանսկրիտ լեզուի մէջ իսկ կը նշանակէ Տծնական օրեր, հանդիսաւորութիւնք և թվականութեան կարգը. 2. Մոտրագոյն սեի գարնոյ ձի, շորի կամ էջ. սե գինն որ բաշէն սկսած կը ձգուի մինչև ագին. — 3. համաձայն է կարմիր գոյնին. յետոյ աւելացնում է երեք այլ նշանակութիւններ. ազգի, թռչնոյ և քաղաքի: Երկրորդը նոյնպէս կը համաձայնի 1. 2. 3. թիւերու հետ, սակայն կը զուգընթաս Առաջինի 2. թ. հետ, գրելով. « ցուցանէ զմոտրերանց ձիոյ, շորուոյ և իւրոյ, այսինքն այն՝ որ հակեալ ի սեութիւն գորշ իցէ, և այն որ իբրև զզուլայ ձի ի բաշէ իւրմէ մինչ ի յագին ունի սեաւ գին ինչ քարչեցաւ »:

Եթէ բազմաթիւներու ընթերցանուն մինչև ցայտ վայր յառաջ տանելով կանգնէինք, թիրեաքեանն անշուշտ յողթանակած կը լինէր և « պատոն հիմն ի վեր քանդուած: Մակայն յառաջ մատուցանելով ընթերցանուն թիրեաքեանի ընտիր բառարանին և մեր ևս ընտիր և կատարաններու հետ, կը լսենք հետակայնրը. Առաջին թիրեաքեանինը «կը յաւելու ՍՈՐ Արաբերէնի մէջ կը նշանակէ բերդի, ամրոցի պատ, պարիսպ. Գ»»:

Ուրիմ բառագիրք յորիմողն շատ աւելի հմուտ լինելով քան զթիրեաքեանին՝ կ'ըսէ թէ արիական բառն յորք, այլ և այլ նշանակութիւններով հանդերձ՝ սակայն պարսկերէն լեզուին ան հաւասարապէս գաղթական բառ մ'է Արաբերէնի

մէջ Պատ, Որմ նշանակութեամբ, համեմատ մեր հայերէնի փոխառութեան. թէ և արաբերէնն լինի սեմական լեզուներու ընտանիքէն, սակայն վերեւ յիշեցիր որ նորա մէջ ալ սպրդեր են պահչաւ և գննտի զաւտաբարբառներէն ինչ ինչ բառեր՝: Ապա թէ ոչ Պարսկերէն բառերքի յօրինողն ինչո՞ւ պիտի յիշէր Արաբերէնը, եթէ իրեն համար չեզուակամ շահ մը չունենար:

Իրկորոք աւելի հեղինակաւոր է Գէորգ զպրի յօրինած բառագիրքն, որովհետև հաւատարապէս նա հմուտ եղած է թէ՛ Պարսկերէն, թէ՛ Արաբերէն, թէ՛ Տաճկերէն և թէ իւր մայրենի լեզուին: Արդ այդ բառգիրքն յետ տալու աւելի ճշգրիտ և բացայայտ մանկամանութիւններ թիրաքեանի շարած 1. 2. 3. Թիւերուն, կը յաւելու (Թ. 3.) սոր կը նշանակէ « ոՐՄ ՊԱՐՍՊ. զպէ տիվարի. և ըստ այսմ է բառ ընկերական ընդ արէպս »:

Իսկ երրորդն՝ Պարսկերէն — Ազգիարէն կառարեալ բառարանն երկու Սուր ունի առանձին տարանձին, մէկն կը համաձայնի միւս երկու բառագրոց, իսկ երկրորդի առջև զատ դնում է Սուր 3-ը 1- մագլցել (պատն ի վեր), Climbing a wall). — 2. ՔԱՂԱՌ ՄԷ ՊԱՐՍՊ, A wall of a city. — 2. Ապարանջաւք (օղակ) Bracelets (pl. of 3-ը). — 4. Տափակ, ցածր շինութիւն (ինչպէս են ախոռները, ասպատանները) Lofty edifices. — 5. Պատերու լիցքը, Rows of stones in a wall. — Ուստի Գէորգ զպրի Պարսկերէն — Հայերէն և E. Steingass Ph. D. Պարսկերէն — Ազգիարէն բառարանները լիովին իրաւունք տալով և հաստատելով մեր մտքի յղացած գիւտը, Թիրաքեանին կը պարտաւորեցնեն «կուշուքի և հարսանիքի» Սուր ձայները կտրել: Vulnerant omnes, ultima necat.

Ուրեմն նկատելով որ Սուր կամ Սուր բառը Պարսկերէնի (և արաբերէնի) մէջ կը նշանակէ հաստատուն զԱՍ իւր հիմունքների վրայ կանգնած, և թէ նոյն իմաստով Բուզանդ զօրծածք է, նշանակելու Պարսից արքայի ասպատանի շրջապատն.

Նկատելով որ « մեր բառի համեմատութիւնը պարսկերէնի հետ եւթ է » և ըստ երկու բառարաններուն կը նշանակէ ոՐՄ, զԱՍ, ՊԱՐՍՊ, ՈՍՍՈՒՄ

կ'եզրակացնենք որ մեր Սորակալն կը նշանակէ « Պատնիշափակ, պարսպափակ շինի, տեղոյ կառավարիչը. այսպէս Պարսից արքայի ասպատանն, ձիանոցները, ախոռները, քաղաքամի, զուարակափակ տեղոյ մէջ ամփոփուած, որու վարիչն է ՍՈՐԱՎԱՆ, նոյն և զուրի ու վերակացու տանը, աւանին ԱՌԱՊԱԳԵՅՆ »:

Եւ մեր պաշտպանած շրջափակ պարսպներն բոլորովին տարբեր են « Արեւիքի և ի մասնաւորի Պարսկաստանի » գեղշուկ պատերէն. մենք օրինակներով բացատրած ենք թագաւորական հաստատութեանց մասին, ինչպէս են այժմու և ամէն ժամանակի իշխաններու և թագաւորներու շրջափակ կալուածներն, Վիլլաներ, դըղեակներ, ապարաններ: Մենք համարած ենք որ Պարսից արքայի Ասպատանն, նոյնքան գեղեցիկ ընդարձակ և արքայալայել եղած լինի, որքան Խոսրովու կառուցած « Տիկնունի ասպարանքն » և « Տանճար մայրի » և Կրուանդայ « Ենընդոց անտառն »: Որով « որմամտ արգելոցացքի, «պարսպեալ փակեցին» և «քաղաքորմ» ի վարիչն կամ ԽԱՍՏԱՎԱՆ, առանց վիրաւորուելու կրնան կողմ ինքզինքսին ՊԱՐՍՊԱՎԱ և կամ ՍՈՐԱՎԱ կամ ԱՌԱՊԱԳԵՍ ասպատանին արքային Հայոց Մեծաց:

Հ. Գ. ՆԱՍՊԱԳԵՅԵՆ

ԼԵԶՈՒՊՈՒԹԻՄԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ

F

Ա Ն Տ Ե Ղ Ո Ւ Թ Ի Խ Գ

(Շար. տես Բազմ. 1924, էջ 272)

7. — Հայերէն այբուբենը կը գործածուի նաև իւր թրուահամար գլխոց, և մեծ դիրութիւն, խնայողութիւն ու զարդէ թէ՛ գրողաց և թէ՛ տպագրութեան համար: Երևանեան ուղղագրութիւնը ջնջելով կ'կամ եօթն թրուահամարը, տապալեց այբուբենին այդ կարևոր պաշտօնը: Որուն անձանօթ կ'ովկանեցիք ոմանք եթէ առին

1. Հիւպը. Հայ թբ. I. Բառաստուգութիւն: